DOI: 10.61760/18290108-shr.25.2-87

ՀԱՊԿ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ*

Մ. Ա. ՇԻՐԻՆՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի պաշտոնաթող գեներալ-մայոր

Ներածություն

Անվտանգությունը ոչ միայն քաղաքագիտական հասկացություն է, այլև մարդու հիմքային պահանջմունք, որի բավարարումը շարժառիթների հիմնական աղբյուրներից է[1]: Ընդսմին անվտանգությունը կարող է վերաբերել անհատի, ընտանիքի, խմբի, հասարակության, պետության, մարդկային կենսագործունեության ցանկացած ոլորտի: Ինքնին հասկանալի է, որ անվտանգությունն ավելի հեշտ է ապահովել խմբով՝ կոլեկտիվ եղանակով, քան առանձին՝ անհատապես: Ուստի պետությունները ևս, Վեստֆալյան աշխարհակարգում դառնալով միջազգային հարաբերությունների և անվտանգության ապահովման գլխավոր սուբյեկտը[2], ընդունեցին կոլեկտիվ անվտանգության կանտյան գաղափարը և ձեռնամուխ եղան համապատասխան կառույցների ստեղծմանը[3]:

Սկզբում ստեղծվեցին կոլեկտիվ անվտանգության համընդհանուր մասշտաբի կառույցները (Ազգերի լիգան, ապա՝ Միավորված ազգերի կազմակերպությունը): Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմում հակաֆաշիստական դաշինքում միավորված Հաղթած պետությունների միությունը շուտով տրոհվեց այսպես կոչված ազատական ժողովրդավարության ու

* Հոդվածն ստացվել է 22.05.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 10.07.2025:

[1] Տես *Abraham H. Maslow.* A Theory of Human Motivation. Originally in “Psychological Review”, 1943, Vol. 50, Issue 4 (http://www.livrosgratis.com.br/ler-livro-online-88633/a-theory-of-human-motivation):

[2] Տես *Carlo Jean.* The Role of the Nation State in Providing Security in a Changed World. “The International Spectator”, January-March 1998, Vol XXXIII, N 1; *А. А. Куковский.* Государство как основной субъект обеспечения национальной безопасности: механизм реализации. «Вестник ЮУрГУ», 2012, № 29 (https://vestniklaw.susu.ru/31/Kukovskii.pdf):

[3] Այս մասին հանգամանորեն տես *Տ. Տ. Քոչարյան,* Կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունների առանձնահատկությունները. քաղաքագիտական վերլուծություն ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի օրինակով: «ՀԲ», 2023, հմ. 3, *Մ. Ա. Շիրինյան,* Կոլեկտիվ անվտանգության ձևաչափը Ազգերի լիգայի և Միավորված ազգերի կազմակերպության օրինակով. համեմատական վերլուծություն: «ՀԲ», 2025, հմ. 1:

սոցիալիզմի գաղափարներ դավանող պետությունների ճամբարների, որոնց դիմակայությունն առանձնակի ինտենսիվ կերպով էր դրսևորվում Եվրոպայում[4], որտեղ ձևավորվեցին երկու հակադիր բլոկներ՝ Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ, *North Atlantic Treaty Organization)* և Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը (ՎՊԿ, *Организация Варшавского Договора),* որոնց միջև առճակատումն ստացավ «Սառը պատերազմ» խորհրդանշական անվանումը, թեև պարբերաբար բռնկվում էին *պրոքսի (proxy)* պատերազմներ[*], այսինքն՝ միջնորդավորված պատերազմներ: Սակայն ԽՍՀՄ և ՎՊԿ փլուզումով ազդարարված՝ «Սառը պատերազմի» ավարտով Արևմուտք–Արևելք դիմակայությունը չավարտվեց, այլ սաստկացավ (թեև երբեմն տեղի էին ունենում կարճաժամկետ «ջերմացումներ») 2014 թվականից մինչ օրս:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանն զգաց, որ ոչ միայն էական կորուստներ է ունեցել և՛ ռազմական ու տնտեսական ոլորտներում, և՛ միջազգային հեղինակության առումով, այլև տարաբնույթ սպառնալիքներ են ծագում անմիջականորեն իր պետական սահմանների մերձակայքում և ինքն էլ զրկվում է իր դաշնակիցներից ու նրանց հետ տնտեսական կապերից, ուստի որոշեց պահպանել իր ռազմաքաղաքական ու տնտեսական ազդեցությունը գոնե հետխորհրդային տարածությունում: Այդ նպատակով նա փորձեց ստեղծել նախկին խորհրդային հանրապետությունների միություն՝ Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ), որի նախատիպը, մեր կարծիքով, կարելի է որոշ չափով համարել Եվրոպական Միությունը[5]: Սակայն դա անկենսունակ կառույց էր՝ «մեռելածին երեխա»: Բանն այն է, որ Խորհրդային Միության կազմում ընդգրկվել էին նախկին Ռուսաստանի Կայսրության ժողովուրդները, որոնք գտնվում էին զարգացման շատ տարբեր մակարդակներում և հիմնականում չունեին պետական-քաղաքական ինքնուրույնության փորձ[6]:

---

[4] Տես *Владимир Егоров.* Холодная война. Начало (1946–1953). «Живая история», 17.01.2018 (https://lhistory.ru/statyi/holodnaya-vojna-nachalo-1946-1953); “Britannica” (https://www.britannica.com/event/Cold-War):

[*] Այդպես են կոչվում այն ռազմական հակամարտությունները, որոնցում «մեկ կամ ավելի երրորդ մասնակիցներ ուղղակի կամ անուղղակի կերպով սատարում են մեկ կամ մի քանի պետությունների կամ ոչ պետական մարտնչողների ռազմիկների (կոմբատանտների)՝ ջանալով ազդել հակամարտության արդյունքի վրա և այդպիսով առաջ մղել իրենց ռազմավարական շահերը կամ ձախողել հակառակորդի նման ջանքերը» (տես “Britannica” (https://www.britannica.com/topic/proxy-war)):

[5] ԱՊՀ ստեղծման պատմությունը տես, օրինակ, *Լ. Լ. Ոիլուբաբյան,* ԱՊՀ շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համագործակցությունը (1995–1997 թթ.): «ՀԲ», 2013, հմ. 1–2:

[6] Այս մասին տես *Տ. Տ. Քոչարյան,* Նշ. աշխ.: Թեև հոդվածում այդ հեղինակի դիտողությունը վերաբերում է ՀԱՊԿ-ին և պայմանավորում այնտեղ գոյություն ունեցող անկազմակերպվածությունն ու աններդաշնակությունը, սակայն այն առավել ևս վերաբերում է ԱՊՀ-ին, որը ժամանակագրորեն նախորդել է ՀԱՊԿ-ին:

Այնուհետև Ռուսաստանը վճռեց ստեղծել ՀԱՊԿ՝ համարելով, որ դա կլինի ավելի կուռ ու կենսունակ կազմակերպություն, քանի որ դրա հիմքում դրված էր յուրաքանչյուրի համար գերակա շահը, պարզապես կենսական պահանջմունքը՝ անվտանգության ապահովումը:

1. Հայաստանը անվտանգային փնտրտուքում

Հայաստանը՝ որպես պետականության փորձ ու անվտանգության լրջագույն մարտահրավերներ ունեցող պետություն ձգտում է իր ներուժի հնարավորինս լիարժեք օգտագործմամբ և անհատական ու կոլեկտիվ անվտանգության ձևաչափերում ամենատարբեր քայլերի ձեռնարկմամբ համակողմանիորեն ապահովելու իր անվտանգությունն ու կայուն զարգացումը ինչպես իր անվտանգային համակարգի զարգացմամբ, այնպես էլ միջազգային համագործակցությամբ: Տվյալ համատեքստում իր առանցքային դերն ու նշանակությունն ունի ՀՀ դաշինքային քաղաքականությունը, որի ամենից տեսանելի դրսևորումը Հայաստանի անդամակցությունն է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը: Ընդսմին ներկայիս աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաններում էական ու կարևոր նշանակություն է ստացել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կայուն ուղեգծի մշակումը, հատկապես՝ Հայաստան–ՀԱՊԿ և Հայաստան–ՆԱՏՕ հարաբերություններում օպտիմալ հաշվեկշռի որոշումը: Նախապես նշենք, որ և՛ Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ), և՛ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), և՛ անվտանգային ուղղվածությամբ ցանկացած այլ կազմակերպություն գործում են ՄԱԿ-ի Կանոնադրության սկզբունքներին համապատասխան, պատասխանատվության գոտում ունեն դաշնակիցների զորակայաններ, պայքարում են ահաբեկչության դեմ և ռազմաքաղաքական դաշինքի մեկ անդամի վրա զինված հարձակումը դիտում են որպես ագրեսիա բոլոր անդամ պետությունների դեմ: Ուստի խոսքը պետք է վերաբերի դրանց տրամադրած անվտանգային երաշխիքների գոյության և, գոյության դեպքում, արդյունավետության ռեալ գնահատմանը:

Այդ ընդհանրական նմանությունները հիմք են տալիս ՀԱՊԿ-ը համարելու եթե ոչ ՆԱՏՕ-ին որոշակիորեն հակակշիռ կազմակերպություն[7], ապա առնվազն նմանատիպ կառույց: ՀԱՊԿ-ը հատվածաբար ընդգրկում է Կենտրոնական Ասիայի ու Հարավային Կովկասի մի մասն ու Բելառուսը, և այդ գոտիների հետ գործակցող հիմնական խաղացողը Ռուսաստանն է: Դրա համար կան օբյեկտիվ պատճառներ: Ըստ էության, ՆԱՏՕ-ում ԱՄՆ-ի բա-

[7] Տես *A. V. Novikov.* Military and political potential of the CSTO as a counterbalance to NATO policy. “Austrian Journal of Humanities and Social Sciences”, 2016, N 3–4: Հարկ է նշել, որ 2009 թ. փետրվարին ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան հերքել էր դա (տես «Вооружение для защиты. Странам, входящим в ОДКБ, помогут отразить агрессию». ОДКБ, 16.02.2009 (https://odkbcsto.org/news/smi/vooruzhenie_dlya_zashchity_stranam_vkhodyashchim_v_odkb_pomogut_otrazit_agressiyu/)):

ցարձակ գերազանցության պայմաններում կան պետություններ (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա), որոնք «մնացյալ աշխարհում» զբաղեցնում են առաջատար դիրքեր, սակայն ՀԱՊԿ-ում նման պետություններ չկան: Երկրորդ. մի շարք պետություններ գտնվում են Թուրքիայի հզոր ազգակրոնական ազդեցության տակ և քվեարկությունների ժամանակ հաճախ, ըստ էության, արտահայտում են Թուրքիայի տեսակետը, իսկ Բելառուսը, իր առաջնորդի «տարօրինակությունների» բերումով, անթաքույց կերպով ձգտում է «մահմեդականության հետ համերաշխության»[8]: Գուցե և դա է հիմնական պատճառը, որ, ի տարբերություն Հյուսիսատլանտյան դաշինքից, ՀԱՊԿ-ն իր գոյության ամբողջ ընթացքում ընդամենը մեկ անգամ է հակամարտությունում օգտագործել խաղաղապահ ուժերը, այն էլ Ղազախստանում[9]:

Մինչդեռ 2010 թ. Ղրղզստանի հարավում տեղի ունեցած դաժան ազգամիջյան բախումների ժամանակ ՀԱՊԿ-ն ընտրեց «անգործության» ռազմավարություն: Առաջին անգամ Բիշքեկը օգնություն խնդրեց, բայց ոչ մի քայլ չհետևեց: Ռուսաստանի Նախագահ Դմիտրի Մեդվեդևը բացատրեց, որ ՀԱՊԿ-ի խաղաղապահ ուժերը կիրառվում են միայն արտաքին միջամտության դեպքում և ստեղծված իրավիճակում մեղադրեց Ղրղզստանի նախկին կառավարությանը թուլության և «ժողովրդի կարիքները հոգալու» չկամության մեջ[10]: 2020 թ. հոկտեմբերին Ղրղզստանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ՀԱՊԿ-ը նույնպես չմիջամտեց ճգնաժամային իրավիճակին՝ տվյալ իրադարձությունները համարելով ներքին:

2. ՀԱՊԿ-ի գործունեության իրավական հիմքերը

Իրավաքաղաքական առումով ՀԱՊԿ-ի հիմքը 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված Հավաքական անվտանգության պայմանագիրն է[*]: 2002 թվականից այն սահմանակարգային ձևակերպում ստացավ ՄԱԿ-ի Քարտուղարությունում՝ որպես կոլեկտիվ «ինքնապաշտպանության» ու «անվտանգության» սկզբունքների վրա հիմնված ռազմաքաղաքական դաշինք: Ներկայումս ՀԱՊԿ-ի անդամ պետություններն են Ռուսաստանը, Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Տաջիկստանը և Ղրղզստանը: Հայեցա-

[8] Տես, օրինակ, «Александра Лукашенко приняли в Исламе». «Коммерсантъ», 18.04.2016 (https://www.kommersant.ru/doc/2966764):

[9] Տես «Заявление Председателя Совета коллективной безопасности ОДКБ – Премьер-министра Республики Армения Никола Пашиняна», 6 января 2022 г., ОДКБ (https://odkb-csto.org/news/news_odkb/zayavlenie-predsedatelya-soveta-kollektivnoy-bezopasnosti-odkb-premer-ministra-respubliki-armeniya-n/#loaded):

[10] Տես «Силы ОДКБ для стабилизации ситуации в Киргизии пока применяться не будут – Медведев». “Today”, 11.06.2011 (http://today.kz/news/mir/2010-06-11/61874-medvedev-3/):

[*] Պայմանագիրը ստորագրել են Հայաստանը (15 մայիսի 1992 թ.), Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը (մինչև 2 ապրիլի, 1999 թ. և 16 օգոստոսի, 2006 թ.), այնուհետև Ադրբեջանը (24 սեպտեմբերի, 1993 թ. մինչև 1999 թ.), Բելառուսը (31 դեկտեմբերի, 1993 թ.), Վրաստանը (9 սեպտեմբերի, 1993 թ. մինչև 1999 թ.):

կարգային առումով ՀԱՊԿ-ի գործունեությունն ածանցվում է «կոլեկտիվ ինքնապաշտպանության» սկզբունքից, հետևաբար դաշնակիցները պարտավորվում են հնարավոր բոլոր, այդ թվում՝ ռազմական, միջոցների գործադրմամբ ձեռնարկել համատեղ քայլեր ընդհանուր սպառնալիքը չեզոքացնելու համար: Այս սկզբունքը արտացոլված է դաշինքի հիմնարար փաստաթղթերում՝ Պայմանագրում և հայեցակարգում, որոնք նաև նախանշում են դաշինքի ու նրա անդամների քաղաքական վարքը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, որոշակիացնում են ՀԱՊԿ-ի նպատակներն ու խնդիրները, զարգացման տեսլականը: Ինչպես ընդունված է միջազգային պայմանագրերի պրակտիկայում, ՀԱՊԿ-ի հիմնարար պայմանագրի դեպքում ևս նրա բովանդակությունը (այդ թվում՝ համատեղ միջոցառումների բնույթն ու ծավալը) որոշվում է դաշինքի անդամ պետությունների միջև դիրքորոշումների փոխհամաձայնեցման և միասնականացման միջոցով: Պայմանագրի 11 հոդվածները վերախմբագրվել են 2010 թ.: «Հավաքական անվտանգության պայմանագիրն» ստորագրած պետությունները պարտավորվում են միմյանց դեմ գործողություններ չվարել, համաձայնեցնել անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտներում իրենց դիրքորոշումները, ստեղծել ընդհանուր մոտեցումները համակարգող մարմիններ, ձեռնարկել ընդհանուր մարտահրավերներին ու սպառնալիքներին հակադարձելու միացյալ գործողություններ[11]:

Այսպիսով՝ ՀԱՊԿ-ը հայեցակարգային և հռչակագրային առումով կոլեկտիվ ինքնապաշտպանության դասական համակարգ է: Քաղաքական առումով այն ընդհանուր խորհրդային անցյալ ու անվտանգության մարտահրավերներ ունեցող պետությունների միություն է, որը դեռ պետք է անցնի հաստատութենական կայացման երկար ճանապարհ: Այս տեսանկյունից ՀԱՊԿ-ի կայացման ամենից կարևոր ցուցիչը, մեր կարծիքով, պետք է լինի նրա քաղաքական դերի և անդամ պետությունների համար անվտանգության ընդհանուր ընկալումների ձևավորումը, ընդհանրական շահերի գիտակցումն ու առաջնդումը, ինչը, սակայն, կազմակերպության գործունեության ներկա փուլում բախվում է մի շարք դժվարությունների: Դրանց թվում կարող ենք առանձնացնել կազմակերպության անդամների ազգային շահերի՝ միմյանցից օբյեկտիվորեն տարբերվող բաղադրիչները, վտանգների ու սպառնալիքների ընկալումներում եղած տարբերությունները, կոլեկտիվ միջոցներով դրանց արձագանքելու ոչ միշտ ցուցաբերվող պատրաստակամությունը, կանոնադրությամբ որպես պարտադիր իրացման նորմ սահմանված փոխադարձ աջակցության և օժանդակության նկատմամբ անդամների տարբեր մոտեցումները, երրորդ պետությունների հետ հարաբերություններում անդամների՝ միմյանցից տարբերվող շահերն ու քաղաքականությունը, արտաքին հարթակներում ոչ պատշաճ համագործակցությունը և այլն:

ՀԱՊԿ-ի քաղաքական դերին նետված արդի կարևորագույն մարտա-

[11] Տես «Договор о коллективной безопасности от 15 мая 1992 года». ОДКБ (https://odkb-csto.org/documents/documents/dogovor_o_kollektivnoy_bezopasnosti/#loaded):

հրավերներից է նրա անդամների ազգային շահերի և դրանց նկատմամբ երբեմն հակադիր մոտեցումները: Լինելով ազգային անվտանգության ու կայուն զարգացման ելակետային ընկալումների ու նպատակների հավասարակշռված համախումբ՝ ազգային շահերն առաջին հերթին ազգի և պետության անվտանգության, զարգացման ու հեռանկարի ուղենիշներ են, որոնք ուրվագծում են նրա քաղաքականության հիմքերն ու հանգուցակետերը, բնույթը, շեշտադրումները, զարգացման դինամիկան: ՀԱՊԿ-ի անդամների ազգային շահերի համատեղելիության վերաբերյալ պատկերացում կազմելու համար պետք է, բացի հռչակագրային ու հայեցակարգային բաղադրատարրերից, դրանք վերլուծել մի շարք քաղաքական, տնտեսական, ռազմական, քաղաքակրթական և այլ ցուցիչների հիման վրա:

ՀԱՊԿ-ի՝ որպես կոլեկտիվ անվտանգության համակարգի անդամների ազգային շահերի ընդհանրացման աստիճանը գնահատելու համար հաջորդ կարևոր ցուցիչը այդ անդամների ռազմատեխնիկական համագործակցությունն է ինչպես կազմակերպության դաշտում, այնպես էլ այլ պետությունների հետ: Այս առումով պատկերը բավական հետաքրքրական է: Ցանկացած պետության, այդ թվում նաև Հայաստանի, ազգային շահերի կարևորագույն տարրը ռազմաքաղաքական բաղադրիչն է, որը սովորաբար ավելի արդյունավետ կերպով է ապահովվում ու սպասարկվում, եթե պետությունը անդամակցում է կոլեկտիվ անվտանգության որևէ համակարգի կամ դաշինքի:

ՀԱՊԿ-ում Հայաստանը Ռուսաստանի հետ ավելի շատ կապված է եղել երկկողմ հարաբերություններով: Բանն այն է, որ Կենտրոնական Ասիայի պետությունների և Բելառուսի ներկայացուցիչները Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձությունները չեն ընկալում որպես իրենց անվտանգության համար որևէ սպառնալիք: Ռուսաստան–Հայաստան հարաբերությունները ՀԱՊԿ-ի շրջանակներում արդի փուլում որոշակիորեն պրոբլեմային են. Ռուսաստանից օգնությունը գալիս է միայն միջնորդության և խորհրդակցությունների տեսքով՝ Երևանի և Բաքվի միջև դիվանագիտական բանակցությունների փորձերի առնչությամբ: Հայաստանի համար պայքարելու «ցանկություն չունենալը» Ռուսաստանը բացատրում է այն հանգամանքով, որ Հայաստանը ակտիվորեն համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ, թեև իր տարածքում ռուսաստանյան ռազմական ներկայությունը դիտում է որպես անվտանգության երաշխիք[12]:

Հայաստանի և ՀԱՊԿ-ի հարաբերությունները սրվեցին հատկապես 2021 թ. մայիսին և 2022 թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության տարածք Ադրբեջանի ներխուժումներից հետո: 2021 թ. մայիսին Ադրբեջանի Զինված ուժերի զինծառայողների որոշ խմբեր հատեցին Հայաստանի պետական սահմանը և ձեռնարկեցին Սև լիճը շրջապատելուն միտված գործողություններ[13]: ՀԱՊԿ-ի Մշտական խորհրդի 2021 թ. մայիսի 13-ի նիստում

[12] Տես «Пашинян: Армения не стремится в НАТО”». «МИР 24», 11.12.2018 (https://mir24.tv/news/16339122/pashinyan-armeniya-ne-stremitsya-v-nato):

[13] Տես «Հայաստանը դիմում է ՀԱՊԿ-ին»: «Ազատություն ռադիոկայան», 2021 թ. մայիսի 13 (https://www.azatutyun.am/a/31253578.html):

Հայաստանի ներկայացուցիչ Վիկտոր Բիյագովը տեղեկացրել է Հայաստանի և Ադրբեջանի սահմանին մայիսի 12-ին տեղի ունեցած միջադեպի մասին[14]: ՀԱՊԿ-ի կայքում տեղադրված հաղորդագրությունում նշվել է, որ հայկական կողմի կարծիքով Ադրբեջանի Զինված ուժերը խախտել են սահմանը և մի քանի կիլոմետրով խորացել Հայաստանի տարածք: Այնուհետև ՀԱՊԿ-ը հայտարարել է, որ ուշադրությամբ հետևում է Հայաստանի Սյունիքի մարզի սահմանին ստեղծված իրավիճակի զարգացմանը և ըստ այդմ անհրաժեշտության դեպքում կձեռնարկի Հավաքական անվտանգության պայմանագրի դրույթներին ու ՀԱՊԿ-ի Կանոնադրությանը համապատասխան գործողություններ[15]:

2022 թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը, կրկին խախտելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը, նոր լայնածավալ ագրեսիա էր ձեռնարկել Հայաստանի դեմ: Ադրբեջանի հարձակումների կասեցման ուղղությամբ ՀԱՊԿ-ի շոշափելի գործողություններ չձեռնարկելը կրկին Հայաստանում ակտիվացրեց ՀԱՊԿ-ից ՀՀ դուրս գալու հարցի քննարկումները: Հայաստանում ՀԱՊԿ-ից հանրային դժգոհության այս վերջին ալիքը համընկավ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի Հայաստան կատարած այցի հետ, ինչը քննարկումներին ավելացրեց աշխարհաքաղաքական բաղադրիչ, քանի որ տվյալ ժամանակահատվածում ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև տեղի էր ունեցել հարաբերությունների խզում:

Մասնավորապես՝ Հայաստանի ԱԳՆ խոսնակ Անի Բադալյանը *“Armenia Today”*-ին հայտնեց, որ ՀՀ-ն ձեռնպահ կմնա «ՀԱՊԿ-ի 2024 թ. բյուջեի մասին» Հավաքական անվտանգության խորհրդի 2023 թ. նոյեմբերի 23-ի որոշմանը միանալուց և կազմակերպության գործունեության՝ դրանով նախատեսված ֆինանսավորմանը մասնակցելուց: Դրա հետ մեկտեղ, ըստ դիվանագիտական գերատեսչության ներկայացուցչի, Հայաստանը չի առարկում կազմակերպության 2024 թ. բյուջեի սահմանափակ ձևաչափով հաստատման դեմ[16]: Չնայած Երևանի պահանջներին՝ ՀԱՊԿ-ը մինչև օրս չի դատապարտել դաշինքի անդամ Հայաստանի դեմ այդ հարձակումը և չի արձանագրել, որ Ադրբեջանը Հայաստանից տարածքներ է բռնազավթել: Ի պատասխան դրան՝ Երևանը մերժեց սահմանին ՀԱՊԿ-ի դիտորդներ տեղակայելու առաջարկությունը, 2024 թ. էլ ՀՀ Վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարեց, որ դաշինքին Երևանի անդամակցությունը դե ֆակտո սառեցված է, և չի բացառել, որ Հայաստանը կարող է դուրս գալ դաշինքից:

[14] Տես «Հայաստանի ներկայացուցիչը ՀԱՊԿ-ի Մշտական խորհրդում ներկայացրել է Սյունիքում Ադրբեջանի գործողությունները»: «Ազատություն ռադիոկայան», 2021 թ. մայիսի 13 (https://www.azatutyun.am/a/31253233.html):

[15] Տես «Комментарий ОДКБ в связи с ситуацией в зоне армяно-азербайджанской границы в Сюникской области Армении», 13.05.2021 (https://odkb-csto.org/news/news_odkb/kommentariy-odkb-v-svyazi-s-situatsiey-v-zone-armyano-azerbaydzhanskoy-granitsy-v-syunikskoy-oblasti/#loaded):

[16] Տես «Հայաստանը ձեռնպահ կմնա ՀԱՊԿ-ի գործունեության ֆինանսավորմանը մասնակցելուց. ԱԳՆ»: “Armenia Today", 2024 թ. մայիս 8 (https://armeniatoday.am/hy/politics/foreign-policy/742952/):

Փաստացի, Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին ուղղակիորեն կախված է Հայաստան–Ռուսաստան հարաբերությունների վիճակից, և ՀԱՊԿ-ի ցանկացած որոշում անմիջապես ազդում է այդ հարաբերությունների վրա: Հայաստանը ՀԱՊԿ-ին իր անդամակցությունը միշտ դիտել է որպես Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքի լրացուցիչ կապուղի: Հայաստանի վերաբերյալ ՀԱՊԿ-ի ցանկացած որոշում Հայաստան–Ադրբեջան հարաբերությունների համատեքստում դե ֆակտո կայացնում է Ռուսաստանը: Դրա հետ մեկտեղ նշենք, որ Ռուսաստանի ռազմավարական նպատակն է մեծացնել իր ազդեցությունը Հարավային Կովկասի ամբողջ տարածաշրջանում, ինչը պահանջում է կայուն գործընկերություն, առաջին հերթին, Ադրբեջանի հետ:

Որպես ազդող հանգամանք կարելի է շեշտել այն, որ ՀԱՊԿ-ի մյուս անդամները հավասար կամ նույնիսկ ավելի լավ հարաբերություններ ունեն Ադրբեջանի հետ, քան Հայաստանի: Ղազախստանն ու Ղրղզստանը Թյուրքալեզու պետությունների կազմակերպության անդամ են, իսկ Բելառուսը ամուր տնտեսական և ռազմական համագործակցություն ունի Ադրբեջանի և Թուրքիայի հետ:

Ըստ էության, ՀԱՊԿ-ն ակտիվորեն օգտագործվում է ոչ թե որպես ռազմաքաղաքական դաշինք, այլ որպես առևտրի և ռազմական տեխնիկայի արտոնյալ փոխանցման և նախկին խորհրդային հանրապետությունների զինվորների պատրաստման ենթակառուցվածք: Ուստի այն կարելի է դիտել որպես «փոխանցող կազմակերպություն»՝ խորհրդային ռազմական չափանիշներից ժամանակակից մոդելներին ԱՊՀ պետությունների անցնելու համար: Մասնակից պետությունները հնարավորություն ունեն նոր ռուսաստանյան զենքերը ձեռք բերելու արտոնյալ ներքին գներով: Այս տարբերակին հիմնականում դիմում են Բելառուսն ու Ղազախստանը:

Հարկ է նշել, որ ՀԱՊԿ-ում հումանիտար ոլորտում համագործակցությունը ցածր մակարդակի է, հատկապես՝ մշակութային գործունեության, կրթության և ժողովրդավարական արժեքների առաջմղման առումով: Սա ՀԱՊԿ-ի՝ դրական խաղաղարարական կերպարից զուրկ լինելու հիմնական պատճառներից մեկն է:

ՀԱՊԿ-ում մշակված չեն նաև անվտանգության դեմ սպառնալիքների կանխատեսման արդյունավետ գործիքներ: Նման մեխանիզմները պետք է ներառվեն Կանոնադրության մեջ, որպեսզի կազմակերպությունը ոչ միայն պատրաստ լինի արձագանքելու ճգնաժամային իրավիճակներին, այլև գործի կանխարգելիչ ազդեցությամբ: Այս խնդիրը լուծելու համար արդյունավետ կլիներ ՀԱՊԿ-ից ակնկալել համագործակցության ամրապնդում գիտական ոլորտում և ամենամյա տարածաշրջանային վերլուծության պրակտիկայի կիրառում Կենտրոնական Ասիայում, Բելառուսում և Հայաստանում նոր սպառնալիքների կանխման մեթոդների և առաջարկությունների մշակմամբ: Դա կարող են անել արդեն հաստատված գիտափորձագիտական խորհուրդը, ՀԱՊԿ-ի վերլուծական ասոցիացիան և անկախ փորձագետները (Հայաստանից որպես լիարժեք համադասող հաստատություն առավել նպատակա-

հարմար է թվում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի թեկնածությունը, քանի որ ժամանակին նա արդյունավետ կերպով համագործակցել է ՀԱՊԿ-ի համապատասխան կառույցների հետ):

Խնդրահարույց է նաև այն, որ ՀԱՊԿ-ի գործունեությունը լիարժեքորեն թափանցիկ չէ և հարցեր է առաջացնում մի շարք փորձագիտական շրջաններում: Կարծում ենք, որ արդյունավետ և օգտակար կազմակերպության կերպար ստեղծելու համար ՀԱՊԿ-ից կպահանջվեն ոչ միայն քարոզարշավներ, այլև մարդասիրական ծրագրերի համար միջոցների հատկացում: Բացի այդ, նիստերում ընդունվող որոշ փաստաթղթեր, այդ թվում՝ բյուջեի և ծրագրված ծախսերի վերաբերյալ, պետք է բաց կերպով հրապարակվեն կազմակերպության պաշտոնական հարթակներում:

Ամփոփելով այս համառոտ վերլուծությունը՝ նշենք, որ ՀԱՊԿ-ը, ըստ էության, գոյություն ունի ընդամենը երկու տասնյակ տարի, ուստի ցանկության դեպքում կարող է վերածվել կոլեկտիվ անվտանգության արդյունավետ ու գործուն տարածաշրջանային կազմակերպության, ու թեև այդ ճանապարհին կան բազմաթիվ խութեր, բայց «երկաթե» քաղաքական կամքի առկայության դեպքում, կարծում ենք, այդ խոչընդոտները հաղթահարելի են:

Ամփոփում

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ՝

– հայեցակարգային ու հռչակագրային առումով ՀԱՊԿ-ը կոլեկտիվ անվտանգության համակարգ է, որի գործունեությունը հիմնված է «կոլեկտիվ ինքնապաշտպանության» ու «կոլեկտիվ անվտանգության» սկզբունքների վրա: Իրավական առումով լինելով ռազմաքաղաքական դաշինք՝ ՀԱՊԿ-ը, սակայն, ունի արարողակարգային ու ներքին կանոնադրական նորմեր, որոնք զգալի չափով խաթարում են այդ կազմակերպության բնականոն նպատակային գործունեությունը,

– իրական քաղաքականության մեջ դաշինքների գործունեության անվտանգային բաղադրիչը անմիջական ու միավորող կայուն կապ է ստեղծում պետությունների միջև, եթե խարսխված է տնտեսական և այլ շահերի ընդհանրության վրա: Զարգացած փոխադարձ ապրանքաշրջանառությունը, ակտիվ տնտեսական շփումները այն առանցքային գործոններն են, որոնք ամրապնդում են տարբեր աշխարհընկալում ունեցող և զարգացման տարբեր մակարդակներում գտնվող պետությունների դաշինքները, պայմաններ ստեղծում, որ դրանք լինեն կենսունակ և ունենան փոխշահավետ զարգացման հստակորեն ուրվագծվող ու երկարաժամկետ հեռանկարներ,

– կոլեկտիվ անվտանգության ապահովման վերաբերյալ արդյունավետության ու կենսունակության հիմնական ցուցանիշը անդամ պետությունների ազգային շահերի նկատմամբ կազմակերպության հավասարարժեք մոտեցումներն են և այլ միջազգային կազմակերպությունների հարթակներում տվյալ հիմքով համակարգված քաղաքական վարքը:

Բացի այդ, ՀԱՊԿ-ում ընդունված որոշ կարգավորումներ չունեն իրագործման անհրաժեշտ մեխանիզմներ: Օրինակ՝ ՀԱՊԿ-ն ունի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը կարգավորող դաշտ, սակայն համապատասխան մեխանիզմները հստակեցված չեն, ինչի պատճառով այսօր այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը սահմանափակ է:

Ավելին. ի սկզբանե ՀԱՊԿ-ն ստեղծվել է նոր բնույթի սպառնալիքների դեմ պայքարելու համար՝ ահաբեկչություն, ծայրահեղականություն, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, անօրինական միգրացիա, մարդկանցով առևտուր: Բայց կազմակերպությունը դեռևս չունի արդյունավետ մեխանիզմներ, ինչպես միջազգային, այնպես էլ ներքին բնույթի ժամանակակից հակամարտությունները կարգավորելու համար: Մեխանիզմների ստեղծումը կուժեղացնի կազմակերպության ներուժը տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում:

БЕЗОПАСНОСТНАЯ ПОЛИТОЛОГИЯ

АНАЛИТИЧЕСКАЯ ОЦЕНКА СТРАТЕГИЧЕСКИХ РАЗВИТИЙ И СОВРЕМЕННЫХ ВОЗМОЖНОСТЕЙ ОДКБ С ТОЧКИ ЗРЕНИЯ БЕЗОПАСНОСТНЫХ ИНТЕРЕСОВ РА

М. А. ШИРИНЯН, генерал-майор ВС РА в отставке

РЕЗЮМЕ

Анализ организационных принципов и механизмов деятельности региональной системы безопасности в приложении к ОДКБ позволяет сделать следующие выводы:

- концептуально и декларативно ОДКБ является системой коллективной безопасности, деятельность которой основана на принципах «коллективной самообороны» и «коллективной безопасности». Будучи юридически военно-политическим альянсом, ОДКБ, однако, имеет протокольные и внутренние уставные нормы, которые в значительной степени подрывают естественную целенаправленную деятельность этой организации;
- безопасностная составляющая деятельности альянсов в реальной политике создает прямую и объединяющую устойчивую связь между государствами, если она зиждется на общности экономических и других интересов. Активные экономические, культурные и иные контакты являются теми ключевыми факторами, которые укрепляют союзы находящихся на разных уровнях развития государств с различными мировоззрениями, создавая условия для их жизнеспособности и долгосрочных перспектив взаимовыгодного развития, чего нет в ОДКБ;

– ключевым показателем эффективности и жизнеспособности в отношении обеспечения коллективной безопасности является равноценный подход организации к национальным интересам государств-членов и систематизированное на данной основе политическое поведение на площадках других международных организаций, что также не соблюдается в ОДКБ.

Кроме того, некоторые принятые в ОДКБ регулировки не имеют необходимых механизмов реализации. Например, ОДКБ имеет базу, регулирующую сотрудничество с международными организациями, но соответствующие механизмы не уточнены. Более того, изначально ОДКБ создавалась для борьбы с угрозами нового характера: терроризм, экстремизм, наркотрафик, нелегальная миграция, торговля людьми, но пока не имеет эффективных механизмов урегулирования международных и внутренних конфликтов. Создание подобных механизмов укрепит потенциал организации в обеспечении региональной безопасности.

SECURITY POLITICAL SCIENCE

ANALYTICAL ASSESSMENT OF STRATEGIC DEVELOPMENTS AND MODERN OPPORTUNITIES OF THE CSTO IN TERMS OF THE RA SECURITY INTERESTS

M. A. SHIRINYAN, Major General (Ret.) of the RA Armed Forces

SUMMARY

The analysis of the organizational principles and mechanisms of the functioning of a regional security system regarding the CSTO enables us to draw the following conclusions:

– conceptually and declaratively, the CSTO is a system of collective security, the efforts of which hinge on the principles of “collective self-defense” and “collective security”. Notwithstanding the fact that the CSTO legally is a military-political alliance, it has recorded and internal codes of regulation that significantly undermine the natural and purposeful activities of this organization;
– the security component of the activities of alliances in realpolitik creates a direct and uniting strong bond among states, assuming it underlies common economic and other interests. Active economic, cultural and other ties are the key factors enhancing the unions of states with different levels of development and diverse outlooks, hence creating conditions for their viability and long-term prospects for mutually beneficial development, which is not the case in the CSTO;

– the key indicative factor of effectiveness and viability regarding the provision of collective security is the organization's equal approach to the member states' national interests, and their political behavior systematized upon this on the platforms of other international organizations, which the CSTO doesn't adhere to as well.

Besides, a number of CSTO-adopted regulations lack the necessary implementation mechanisms. For example, the CSTO does have a framework regulating cooperation with international organizations, but the relevant mechanisms are not detailed. Moreover, the CSTO was initially established to combat novel threats: terrorism, extremism, drug trafficking, illegal migration, human trafficking, however, so far it is short of effective mechanisms for settling international and internal conflicts. Creating such mechanisms will amplify the organization's potential to ensure regional security.